□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□

Զաքարիա մարգարեն աստվածաշնչյան 12 փոքր մարգարեներից է: Աստվածաշունչ մատյանում 14 գլուխներից բաղկացած նրա գիրքն ամենամեծն է փոքր մարգարեների գրքերից: Այն կոչվում է նաև հույսի գիրք, որ պատկերում է Աստծո թագավորության տարածումն Իսրայելում՝ Սողոմոնի տաճարի վերաշինման միջոցով: Զաքարիայի մարգարեությունները վերաբերում են Ն. Ք. 520-517 թվականներին, երբ Զորաբաբելն ու Հեսուն վերականգնում էին Աստծո տաճարը Երուսաղեմում: Հենց այստեղ է, որ Զաքարիան, իբրև Տիրոջ մարգարե, սկսում է իր առաքելությունը հրեից մեջ եւ գործուն կերպով աջակցում տաճարի վերակառուցմանը:

Զաքարիայի մարգարեությունն արժեքավոր է ոչ միայն իր տեսիլքներով, այլեւ Քրիստոսի՝ Մեսիայի գալստյան մասին մարգարեություններով (Զաք. 9: 9 -10, 11:12-13, 12:10, 13:7): Նա մարգարեացել է Մեսիայի (Հիսուսի) գալուստը, Նրա հաղթական մուտքը Երուսաղեմ, խաչելությունը, գեղարդով խոցվելը, երեսուն արծաթով վաճառվելը եւ այլն: Հետագայում ավետարանիչները, պատմելով Հիսուսի կյանքի վերոհիշյալ դեպքերը, հիշատակել են Զաքարիայի մարգարեությունները: Համաձայն Մատթեոս ավետարանչի, Զաքարիա մարգարեն սպանվել է Տաճարում (Մատթ. 23: 35):

Զաքարիա մարգարեի ոգին եւ կեցվածքն ուսուցողական եւ կենդանի պատգամ են՝ ուղղված ամենքի, որով ջանք եւ միջոց չպիտի խնայվեն տաճարների, իբրեւ հավատի վկայարանների վերականգնման եւ կառուցման համար, քանզի դրանք են, որ վկայում են հույսի ու հավատի մասին, դրանք են, որ երաշխիք են ազգային միախմբման ու հարատևման:

□□□□□ □□□□□□□□□

17.06.2008
07.07.2009
29.06.2010
19.07.2011
03.07.2012
25.06.2013
15.07.2014
30.06.2015
21.06.2016

11.07.2017
26.06.2018
16.07.2019
07.07.2020
29.06.2021
12.07.2022
04.07.2023
25.06.2024
15.07.2025
30.06.2026
22.06.2027
11.07.2028
26.06.2029
16.07.2030